

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**  
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

**1. Իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.**

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ նաև՝ Նախագիծ) ընդունումը պայմանավորված է պայմանավորված է քրեական գործերով մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի սահուն և անխափան ներդրումն ապահովելու, դրանով պայմանավորված՝ քրեական վարույթների սահուն ընթացքն ապահովելու անհրաժեշտությամբ: Բացի այդ, Նախագծի ընդունումը պայմանավորված է Հակակոռուպցիոն կոմիտեում (այսուհետ նաև՝ Կոմիտե) առկա գործերի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու, այն կառավարելի դարձնելու միջոցով կոռուպցիոն ենթադրյալ հանցանքների նախաքննությունը պատշաճ և որակյալ իրականացնելու հրամայականով:

**2. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիր.**

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունումը չի բխում համապատասխան ռազմավարական փաստաթղթերից:

**3. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.**

Պետական հատվածի արդիականացման 3-րդ ծրագրի շրջանակում «Հայաստանի քրեական գործերի մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի մատակարարման և տեղադրման» առաջադրանքի իրականացման նպատակով, ՀՀ դատախազության, ՀՀ վարչապետի աշխատակազմի և IUnetworks LLC, Teched Consulting Services Ltd., Nikita Mobile LLC (Հայաստան) համատեղ ձեռնարկության միջև 14.12.2020թ. կնքվել է PSMP3-GO-2-2-4 պայմանագիրը: Նշված պայմանագրի շրջանակներում մատակարար ընկերության կողմից 2021թ. հունիսին իր ավարտուն տեսքին է հասցվել և ներկայումս պիլոտային գործարկման փուլում է գտնվում Քրեական գործերով մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգը (այսուհետ՝ Համակարգ):

Համակարգի գործարկումը միտված է արագացնելու քրեական վարույթի հանրային մասնակիցների միջև տեղեկատվության հասանելիությունը, բացառելու քրեական վարույթով հնարավոր կեղծիքները, նվազագույնի հասցնելու թղթային փաստաթղթաշրջանառությունը:

Համաձայն 2022թ. մայիսի 16-ին ՀՀ Դատախազության և «IUnetworks LLC, Teched Consulting LLC, and Nikita LLC» համատեղ ձեռնարկության միջև 2020 թվականի

դեկտեմբերի 14-ին կնքված PSMP3-GO-2-2-4 պայմանագրի թիվ 3 լրացման՝ 2022 թվականի հունիս-հոկտեմբեր ամիսներին իրականացվել են ՀՀ դատախազության, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և քննչական կոմիտեի աշխատակիցների վերապատրաստումներ՝ նախապես ներկայացված և համաձայնեցված գրաֆիկով:

Ներկայումս աշխատանքներ են կատարվում ՀՀ ՊԵԿ քննչական վարչության և ԱԱԾ քննչական դեպարտամենտի աշխատակիցների վերապատրաստումների համար:

Դասընթացների շրջանակներում Համակարգի փորձնական միջավայրում ռեալ ժամանակում մասնակիցներին ներկայացվել են Համակարգի հնարավորությունները, դրա ընձեռած գործիքակազմը, համակարգում գոյություն ունեցող դերերը, նրանց ընձեռնվող հնարավորություններն ու լիազորությունները, համակարգի ինտերֆեյսը, ընդհանուր գործիքակազմն ու դրանց առանձնահատկությունները, համակարգի ներդրման արդյունքում տրվող լրացուցիչ հնարավորություններն ու գործիքները: Առանձին ուշադրություն է դարձվել նաև քրեական վարույթներին վերաբերող գործիքակազմի ներկայացմանն ու մեկնաբանմանը ինչպես նաև մասնակիցների հարցերին հնարավորինս ամբողջական և մեկնաբանված պատասխանելուն:

ՀՀ դատախազությանը՝ որպես պատվիրատու, մատակարարվել են Համակարգի օգտվողի ուղեցույցերն ինչպես տեխնիկական մասնագետների (համակարգի ադմինիստրատոր) այնպես էլ շահառու մարմինների աշխատակիցների համար՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Ուղեցույցերը ներկայացնում են համակարգի հնարավորությունները, դրա կիրառման առանձնահատկությունները, հիմնական գործիքակազմն ու հասկացությունները, անդրադառնում են նաև տվյալների մուտքագրման, համակարգում գոյություն ունեցող դաշտերի ու տվյալների ֆորմատի առանձնահատկությունների նկարագրմանն ու մեկնաբանմանը: Ուղեցույցերը մատակարարվել են էլեկտրոնային տարբերակով, մեկական օրինակներով PDF ֆորմատով:

ՀՀ դատախազությանն է փոխանցվել նաև մշտական, անբեկանելի լիցենզիա պատվիրված ծրագրաշարին և նյութերին, որոնք վավեր են պատվիրատուի, նրա ենթակա կազմակերպական ստորաբաժանումների և ցանկացած իրավահաջորդի կողմից օգտագործելու համար:

Սույն լիցենզիան ՀՀ դատախազությանն իրավունք է տալիս փոփոխել, ընդլայնել, կրկնօրինակել և պատրաստել ածանցյալ ծրագրակազմ կամ նյութեր՝ Պատվիրատուի, նրա ենթակա կազմակերպական ստորաբաժանումների և իրավահաջորդների կողմից Պատվիրատուի գործունեության բնականոն ընթացքում օգտագործելու համար:

ՀՀ դատախազությանն է փոխանցվել նաև պատվիրված ծրագրաշարի ելակետային կոդի (ներառյալ ծրագրավորողների համար հրահանգները) էլեկտրոնային պատճենը և դրան վերաբերող բոլոր համապատասխան փաստաթղթերը խտասկավառակի վրա:

**Միևնույն ժամանակ**, անհրաժեշտ է արձանագրել, որ Համակարգի անխափան ներդրումն ապահովելու, քրեական գործերով սահուն ընթացքն ապահովելու, ապացուցողական նշանակություն ունեցող փաստաթղթերի կորուստը և քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իմպերատիվ դատավարական

ժամկետների խախտումները բացառելու նպատակով անհրաժեշտ է որոշակի ժամանակահատվածով հետաձգել Համակարգի ներդրումը և քրեական վարույթի՝ բացառապես էլեկտրոնային եղանակով իրականացումը, քանի որ՝

– Թեև վարույթի հանրային մասնակիցները (դատախազներ, քննիչներ) վերապատրաստումների ընթացքում ծանոթացել են Համակարգի ընձեռած հնարավորություններին և գործունեության սկզբունքներին, այդուհանդերձ Համակարգի լիակատար և անխափան գործարկումն ապահովելու տեսանկյունից նպատակահարմար է, որ յուրաքանչյուր դատախազ, քննիչ և վարույթի հանրային այլ մասնակից Համակարգին առնչվի իրական քրեական վարույթի պայմաններում: Այդ իսկ նպատակով ներկայումս իրականացվում է Համակարգի գործարկման պիլոտային ծրագիր, որի հիմքում դրված է այն տրամաբանությունը, «Հ դատախազության և ՀՀ քննչական կոմիտեի, ինչպես նաև նախաքննական մյուս մարմինների ստորաբաժանումները պետք է հաջորդաբար անցնեն վարույթի վարման էլեկտրոնային համակարգին, որը իրականացվելու է փորձնական և քրեական վարույթի սովորական թղթային վարման կարգին զուգահեռ: Սույն պիլոտային ծրագիրը հնարավորություն կտա ՀՀ դատախազության և ՀՀ նախաքննական մարմինների հնարավորինս շատ ստորաբաժանումների հասու դարձնել էլեկտրոնային վարույթի վարման առանձնահատկություններին, **թույլ կտա վերհանել համակարգի հնարավոր թերություններն ու բացթողումները**, ինչից հետո միայն ամբողջ ծավալով կներդրվի հիշյալ համակարգը:

– Մինչև Համակարգի ամբողջական ներդրումը անհրաժեշտ է լուծել Համակարգի անվտանգային խնդիրները, քննարկել առանձին ինտերնետ կապուլիներ նախատեսելու հնարավորությունը, Համակարգի սերվերների պահպանության և շահագործման հարցերը:

– Մինչև Համակարգի ամբողջական ներդրումը անհրաժեշտ է լուծել տեսաձայնագրմամբ կատարված քննչական գործողությունների արդյունքների պահպանման հիշողության սերվերների հարցը: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ քննչական գործողության պարտադիր տեսաձայնագրում նախատեսող դրույթի ուժի մեջ մտնելու ժամկետ է սահմանված **2023թ. հուլիսի 1-ը**:

– Մինչև Համակարգի ամբողջական ներդրումը պետք է ապահովվի Համակարգի օգտատեր հանդիսացող վարույթի հանրային մասնակիցների մոտ էլեկտրոնային ստորագրությունների առկայությունը:

**Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, այսուհետ՝ Օրենսգիրք) 483-րդ հոդվածի 17-րդ մասի համաձայն՝ 2023 թվականի հունվարի 1-ից գործելու է քննչական ենթակայության հետևյալ կանոնը՝ նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:**

Օրենսգրքի անցումային դրույթներում ամրագրված նորմից բխում է, որ 2023 թվականի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կոռուպցիոն

բոլոր հանցանքների վերաբերյալ վարույթները իրականացնելու են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:

Օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *քննիչն իր իրավասության սահմաններում պարտավոր է քրեական վարույթ նախաձեռնել, եթե առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդումը ստացվել է՝*

1) ֆիզիկական անձից.

2) իրավաբանական անձից.

3) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից՝ նրա գործունեության իրականացման կապակցությամբ.

4) օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնից, քննիչից, դատախազից կամ դատավորից՝ իր լիազորություններն իրականացնելու կապակցությամբ:

Համապատասխան հաղորդումը համարվում է առերևույթ հանցանքի մասին, եթե դրանով փաստվում է այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական:

Նշված նորմի վերլուծությունից երևում է, որ **քրեական վարույթ նախաձեռնելու բացառիկ իրավասությունը պատկանում է քննիչին**: Հարկ է արձանագրել, որ քրեական վարույթի նախաձեռնումը Օրենսգրքի լուրջ ձևափոխությունների ենթարկված և սկզբունքորեն նոր իմաստավորում ստացած ինստիտուտներից մեկն է: Այն էապես տարբերվում է նախկին օրենսգրքով նախատեսված քրեական գործ հարուցելու կամ ինչպես ընդունված էր ասել՝ նյութերի նախապատրաստման փուլից: Ընդ որում, նոր իրավակարգավորումների հիմքում դրված գաղափարախոսությունը հետևյալն է. **քրեական վարույթ նախաձեռնելը պետք է լինի կանոն, իսկ չնախաձեռնելը՝ բացառություն**: Այստեղից հետևում է, որ ենթադրյալ հանցանքի առկայության նույնիսկ փոքր հավանականության դեպքում քրեական վարույթ նախաձեռնելը և հետագայում այն իրավաչափորեն կարճելը չի կարող դիտարկվել որպես բացասական երևույթ կամ չգոհացնող վիճակագրական տվյալ, առավել ևս՝ համարվել վարույթի հանրային մասնակցին կշտամբելու հիմք կամ առիթ, քանզի առերևույթ հանցանքների վերաբերյալ ողջամիտ հաղորդումներին արագ և արդյունավետ արձագանքելը պետության առաջնային պարտականություններից մեկն է:

Այս համատեքստում հատկանշական է, որ ծավալային առումով Կոմիտեի ձևավորումից ի վեր կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քանակային գերակշռությունն արդեն իսկ խոսում է: Այսպես՝ վիճակագրական տվյալների համաձայն՝ 2021 թվականին գրանցված կոռուպցիոն հանցագործությունների թիվը 950 է, վարույթի գործերով և նյութերով՝ 1917, քրեական պատասխանատվության ենթարկվածները՝ 860: 2022 թվականի միայն 1-ին կիսամյակի ընթացքում գրանցված

---

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Երևան 2022, էջ 268-269:

կոռուպցիոն բնույթի հանցագործությունների թիվը՝ 422, վարույթի գործերով ու նյութերով՝ 1393, քրեական պատասխանատվության ենթարկվածները՝ 517<sup>2</sup>: Ինչպես նկատում ենք, 2021 թվականի համեմատությամբ միայն 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում արդեն իսկ 1393 վարույթի գործ և նյութ է եղել, ինչից ենթադրելի է, որ մինչև 2023 թվականը նշված թիվը տրամաբանորեն աճելու է կրկնակի: Վերլուծությունները հնարավորություն են տալիս կանխատեսել, որ 2022 թվականի ընթացքում քրեական վարույթներով և գործերով կոռուպցիոն հանցանքների թիվը գերազանցելու է 2500-2600-ը: Ակնհայտ է, որ այս թիվը էականորեն ավելին է, քան 2021 թվականի տվյալները, և փաստ է, որ կոռուպցիոն հանցանքների թիվը տարեցտարի աճի դինամիկա ունի:

Բացի այդ, հարկ է նկատել, որ Կոմիտեի քննիչների կողմից 2022 թվականի ընթացքում՝ 2022 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ քննվել է **1043** քրեական գործ (վարույթ), որից՝

- **89** քրեական գործ՝ **201** անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան,

- **156-ը** կարճվել է,

- **26-ը** կասեցվել է,

- **60-ը** միացվել է այլ քրեական գործի,

- **276-ն** ուղարկվել է ըստ քննչական ենթակայության,

- **426-ի** նախաքննությունը շարունակվում է:

Հիշյալ ժամանակահատվածում կոմիտեի քննիչների կողմից ընթացք է տրվել **2320** դիմում/հաղորդումների:

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշման որոշման համաձայն՝ *«Հակակոռուպցիոն կոմիտեի առավելագույն հաստիքների քանակը սահմանվել է 170-ը»:*

Նախատեսված 170 հաստիքից ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց հաստիքները ընդամենը 40-ն է:

Հարկ է նկատել, որ նշված գործերի քննությունը 40 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար նախատեսված հաստիքներից իրականացվել է փաստացի 23 քննիչների կողմից: Ստացվում է, որ վիճակագրական տվյալների համաձայն՝ 10 ամսվա ընթացքում մոտ 35 գործ է բաժին ընկել յուրաքանչյուր քննիչի: **Նշվածի հիման վրա կարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր քննիչի ծանրաբեռնվածությունը միջինում փարեկան կգերազանցի 40-45 գործը**, որի պարագայում անիրատեսական է խոսել վարույթի արդյունավետ քննության մասին:

Վիճակագրական տվյալները վկայում են, որ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների ծանրաբեռնվածությունն անընդհատ միայն աճում է: Եթե թվերը համադրենք նախորդ տարիների թվերի հետ, ապա ծանրաբեռնվածության դինամիկ աճն ավելի տեսանելի կդառնա, օրինակ՝ 2021 թվականին նույն քննիչների քանակով ՀՀ հատուկ

<sup>2</sup> Տե՛ս armstat.am

քննչական ծառայությունում շուրջ 10 ամիսների ընթացքում քննվել է ընդամենը **580 քրեկան գործ**, իսկ 2022 թվականի 11 ամիսներին **Կոմիտեի քննիչների կողմից արդեն՝ 1043**։

Բացի այդ, նշված գերձանրաբեռնվածությունն արդեն իսկ առկա է այն պարագայում, երբ գործող օրենսդրությամբ նախաքննությունը Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչներն իրականացնում են կոռուպցիոն ոչ բոլոր հանցանքների վերաբերյալ։

Այսպես՝ Օրենսգրքի 483-րդ հոդվածի 16-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ *նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները, եթե հանցանքները կատարվել են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, պետական, պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմնի, պետության կամ համայնքի կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության կամ հիմնարկի անունից հանդես գալու լիազորություն ունեցող կամ դրանց անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող, ինչպես նաև «բ-գ» ենթակետերում նշված պաշտոնատար անձանց կողմից՝ իրենց պաշտոնական դիրքի հետ կապված, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 272-277-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնցով նախաքննությունը կատարում են քննչական կոմիտեի քննիչները։ Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 441-րդ և 549-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները, բացառությամբ երբ արարքը կատարվել է ոչ շահադիպական շահագրգռվածությունից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով։*

Ինչպես տեսնում ենք, Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ենթակա չեն մասնավոր ոլորտի կոռուպցիոն հանցագործությունները, հանրային ոլորտի ծառայողների կատարած հանցագործությունները, ինչպես նաև բռնությամբ և զենքով լիազորությունների անցումները։ Այլ խոսքով՝ ընդամենը հանրային ոլորտի ծառայողների (այն էլ՝ նրանց մի մասի) հանցանքների դեպքերով արդեն իսկ Կոմիտեի քննիչների ծանրաբեռնվածությունն աննախադեպ աճել է։

Հարկ է նկատել, որ գործող օրենսդրության համաձայն՝ Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ոչ ենթակա կոռուպցիոն մյուս դեպքերի քննությունն իրականացնում են նախաքննական այլ մարմինները։

Նշվածի համատեքստում կանխատեսվում է, որ 2023 թվականի հունվարի 1-ից, երբ Օրենսգրքի դրույթներին համահունչ, քննչական ենթակայության կանոնները կփոփոխվեն, և Կոմիտեի քննիչներին վերապահված կլինեն ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 1-ով նախատեսված կոռուպցիոն բոլոր հանցագործությունները, Կոմիտեում քննվող վարույթների դիմումների քանակը կրկին էականորեն աճելու է (ընդհուպ՝ կրկնապատկում)։ Նույն կերպ՝ ըստ վարույթների քանակի, որպես հետաքննության

մարմին, էականորեն աճելու է (ընդհուպ՝ կրկնապատկում) Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման կողմից իրականացվող աշխատանքը՝ գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասով:

Միաժամանակ պետք է նշել, որ 1989 թվականին Փարիզում հիմնադրված «Փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբի» (այսուհետ՝ ՖԱԹՖ) 30-րդ հանձնարարականի տեխնիկական համապատասխանության և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի արդյունավետության գնահատման համար մեթոդաբանության համաձայն՝ իրավապահ և քրեական հետապնդում իրականացնող մարմինները պետք է ապահովված լինեն ֆինանսական, մարդկային և տեխնիկական համարժեք ռեսուրսներով: Պետությունները պետք է ներդնեն հսկողական մեխանիզմներ՝ հավաստիանալու համար, որ այդ մարմինների աշխատակիցներն առաջնորդվում են մասնագիտական բարձր չափանիշներով, այդ թվում՝ կոնֆիդենցիալության մասով, բարեխիղճ կերպով կատարում են իրենց պարտականությունները և ունեն բավարար հմտություններ<sup>3</sup>:

Մարդկային համարժեք ռեսուրսներ ասելով՝ անհրաժեշտ է հասկանալ աշխատակիցներ՝ ***քննիչներ, ուլքեր կապահովվեն բավարար ժամանակով***, որպեսզի բարեխիղճ ձևով կատարեն իրենց պարտականությունները: Գերծանրաբեռնվածությունը, անկասկած, բերում է ժամանակային ռեսուրսի սպառման, ինչն էլ բացասական ազդեցություն է ունենում քննիչների աշխատանքի արդյունավետության վրա:

Բացի այդ, փողերի լվացման և կոռուպցիոն այլ հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությունը ենթադրում է որոշակի լրացուցիչ տակտիկայի կիրառում: Նախ անհրաժեշտ է հաշվի առնել, որ տվյալները, որոնք ֆինանսական հանցագործությունների վերաբերյալ գործերով դառնում են ապացույց, հիմնականում ստացվում են երկու աղբյուրից՝ հանցագործության սուբյեկտից և այլ մասնակիցներից: Քննությունը պլանավորելիս առաջնայինը պետք է լինի հանցանքը կատարած անձի և նրա իրականացրած գործունեության վերաբերյալ տվյալների հնարավորինս շուտ ստանալը, քանի որ հակառակ պարագայում հանցագործություն կատարած անձի կողմից ամեն հնարավոր ջանք կգործադրվի հանցագործության քննության ուղղությունը շեղելու կամ հանցագործության հետքերը թաքցնելու համար: Առավելագույնս օպերատիվ և տակտիկապես գրագետ պետք է գործել հանցագործության համար էական նշանակություն ունեցող տվյալները քննության համար հնարավորինս շուտ հասանելի դարձնելու նպատակով:

Այս պարագայում ևս հարկ է փաստել, որ գերծանրաբեռնված քննիչի և օպերատիվ-հետախուզական աշխատակցի մոտ առաջացած ժամանակային դեֆիցիտը բացասաբար է ազդելու հանցանքը կատարած անձի և նրա իրականացրած գործունեության վերաբերյալ տվյալների հնարավորինս արագ ստանալու, հետևաբար քննությունն արդյունավետ պլանավորելու, կատարելու վրա:

<sup>3</sup> Տես՝ <https://www.fatf-gafi.org/media/fatf/documents/recommendations/pdfs/FATF-40-Rec-2012-Armenian.pdf>, էջ 13:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է այն մասին, որ տարբեր պետություններում գործում են մասնագիտացված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտման և քննության գործառույթներով օժտված մարմիններ, որոնք, ընտրված մոդելների տարբերություններով հանդերձ, առաջնորդվում են միջազգայնորեն ընդունված սկզբունքներով: Այսպես, Ուկրաինայում գործում է Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոն (այսուհետ՝ Բյուրո): Համաձայն ազգային հակակոռուպցիոն բյուրոյի մասին օրենքի 3.1-ին հոդվածի՝ Բյուրոն պետական իրավապահ մարմին է, որը պատասխանատու է իր իրավասության հետ կապված կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման, քննության, բացահայտման, ինչպես նաև կանխարգելման համար: Կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունավետությունն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Բյուրոյի աշխատակիցները իրականացնում են և՛ օպերատիվ-հետախուզական գործունեություն, և՛ նախաքննություն:

Բյուրոն ունի 237 **քննիչ-ղետեկտիվ**, որոնցից յուրաքանչյուրի վարույթում **տարեկան կտրվածքով միջինով առկա է 3-4 քրեական գործ:**

Բյուրոյի 2022 թվականի 1-ին կիսամյակի աշխատանքների ամփոփման զեկույցի<sup>4</sup> ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Բյուրոն 2022 թվականի հունիսի 30-ի դրությամբ ընդհանուր առմամբ իրականացրել է **859** գործով քննություն, որից **163**-ը նախաձեռնվել են միայն 2022 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում:

Բյուրոյի պաշտոնական կայքէջում հրապարակված հաստիքացուցակի համաձայն<sup>5</sup> քննություն կազմակերպող և կատարող հաստիքների ընդհանուր քանակը կազմում է **249** հաստիք, որից քննությունը կազմակերպող (ղեկավարների) հաստիքները չհաշված՝ զուտ քննիչների (ղետեկտիվների) հաստիքների քանակը կազմում է **237**: Հետևաբար, 1 քննիչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է **3,6** վարույթ<sup>6</sup>:

Այսինքն՝ միջազգային պրակտիկան ևս արձանագրելով, որ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության, այդ ընթացքում ֆինանսական քննության գործընթացը մարդկային մտավոր գործունեության բաղադրիչ է՝ արդյունավետությունն ապահովելու համար պարտադիր է համարել ծառայողների համաչափ ծանրաբեռնվածության ապահովումը և բավարար ժամանակի տրամադրումը:

Հարկ է նկատել, որ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների գերծանրաբեռնվածության պայմաններում քննության ձգձգումը, բացի մարդու իրավունքների խախտումներից և ոչ արդյունավետությունից, կարող է առաջացնել նաև կոնկրետ դատավարական անցանկալի հետևանքներ: Այսպես՝ Օրենսգրքով առաջին

<sup>4</sup> Տե՛ս [https://nabu.gov.ua/sites/default/files/reports/angl\\_sayt\\_final.pdf](https://nabu.gov.ua/sites/default/files/reports/angl_sayt_final.pdf)

<sup>5</sup> Տե՛ս [https://nabu.gov.ua/sites/default/files/page\\_uploads/22.08/01\\_struktura\\_22\\_08\\_2022\\_2.pdf](https://nabu.gov.ua/sites/default/files/page_uploads/22.08/01_struktura_22_08_2022_2.pdf)

<sup>6</sup>  $\frac{237}{66} \approx 3,6$  <https://nabu.gov.ua/struktura-0>, <https://nabu.gov.ua/en/reports>



անգամ սահմանվել են քրեական հետապնդման ժամկետներ: Օրենսգրքի 192-րդ հոդվածի (ուժի մեջ է մտնելու 2023 թվականի հունվարի 1-ից) 1-ին մասի համաձայն՝ մինչդարական վարույթում հանրային քրեական հետապնդումն այն հարուցելու պահից չի կարող տևել ավելի, քան՝

1) երեք ամիս՝ ոչ մեծ ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով.

2) հինգ ամիս՝ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով.

3) ութ ամիս՝ ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով.

4) տասն ամիս՝ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով:

Ընդ որում, նշված ժամկետները խախտելն առաջացնում է որոշակի հետևանքներ: Այսպես՝ Օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ քրեական հետապնդում չպետք է հարուցվի, իսկ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե լրացել է **Օրենսգրքով սահմանված քրեական հետապնդման առավելագույն ժամկետը**, և դատախազն այդ ժամկետի ընթացքում վարույթի նյութերը չի հանձնել դատարան: Օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-9-րդ կետերով նախատեսված հանգամանքները *ոեաբիլիտացնող են:*

Վերոգրյալ նորմից բխում է, որ քրեական հետապնդման ժամկետի խախտումը պատասխանատվությունը բացառող հիմք է, քրեական հետապնդումն այս դեպքերում ենթակա է դադարեցման, այն էլ՝ *ոեաբիլիտացնող* հիմքով, անկախ հանցանքի ծանրությունից:

Այլ խոսքով՝ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների գերծանրաբեռնվածությունը հղի է նաև քրեական հետապնդման ժամկետները խախտելու վտանգներով, որի հետևանքով կոռուպցիոն հանցանք կատարած անձինք կարող են խուսափել քրեական պատասխանատվությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պետք է նշել, որ մշակվել էր նաև Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքներն ավելացնելու նախագիծ: Նշված նախագիծով, սակայն, հաստիքների համալրումը լինելու է փուլային ընթացակարգով մինչև 2023 թվականի ավարտը: Բնական է, որ 2023 թվականի ընթացքում համապատասխան հաստիքների համալրման գործընթացը սկիզբ առնելու պարագայում դեռևս առկա ռեսուրսը բավարար չի լինելու նման մեծ ծավալով գործունեություն իրականացնելու համար, ինչն անկասկած անդրադառնալու է ինչպես գործերի քննության որակի, այնպես էլ ողջամիտ ժամկետի հիմնարար սկզբունքի պահպանման վրա:

Այս համատեքստում հարկ է փաստել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ողջամիտ ժամկետի պահպանման պահանջի վերաբերյալ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- մինչ տարբեր ձգձգումներն ինքնին հարցեր չեն առաջացնում, դրանք, միասին վերցրած, և հանրագումարային առումով կարող են դառնալ ողջամիտ ժամկետը զերազանցելու պատճառ<sup>7</sup>,

- «Երկարատև ժամանակահատվածը, որի ընթացքում վարույթը...դանդաղում է...» առանց ակնկալվող որևէ բացատրության, անընդունելի է<sup>8</sup>,

<sup>7</sup> Deumeland-ն ընդդեմ Գերմանիայի, § 90:

- Վարույթի որոշակի փուլում ձգձգումը կարող է թույլատրելի լինել՝ պայմանով, որ վարույթի ընդհանուր տևողությունը չափազանց երկար չլինի<sup>9</sup>,

- Վարույթի տևողության ողջամտությունը պետք է գնահատվի հետևյալ չափանիշների լույսի ներքո՝ գործի բարդություն, դիմումատուի և իրավապահ մարմինների դրսևորած վարքագիծ և այլն<sup>10</sup>,

- Գործի բարդությունը կարող է կապված լինել և՛ փաստերի հիմքով, և՛ օրենքի հիմքով բարձրացվող հարցերի հետ<sup>11</sup>,

- Պետությունը պատասխանատու է իր բոլոր մարմինների համար՝ ոչ միայն դատական մարմինների, այլև բոլոր հասարակական հաստատությունների համար<sup>12</sup>:

Գործող օրենսդրության պարագայում մինչև Կոմիտեում նշված հաստիքների համալրումը, ամբողջ հանրապետությունում առկա կոռուպցիոն ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ գործերով (վարույթներով) նախաքննության իրականացումը վերապահված է լինելու Կոմիտեի ընդամենը 40 ինքնավար պաշտոնները զբաղեցնող անձանց: Միաժամանակ պետք է նշել, որ հիշյալ 40 ինքնավար պաշտոնների մեջ են մտնում նաև Կոմիտեի նախագահի, վերջինիս տեղակալների, վարչության պետերի և նրանց տեղակալների հաստիքները, որոնց հիմնական գործառույթը մինչդատական վարույթի կազմակերպումն է և որոնք անմիջականորեն ձեռնամուխ չեն լինում քննչական գործողությունների կատարմանը:

Հարկ է արձանագրել, որ համաձայն Հակակոռուպցիոն ռազմավարության՝ Կոմիտեի տարածքային մարմինների ձևավորումը լինելու է աստիճանաբար (Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի 2-րդ միջոցառում): Նշված գործընթացի ուղղությամբ ներկայումս փորձ է արվում իրականացնել գործուն քայլեր, քանզի Կոմիտեն տարածքային ստորաբաժանումներ չունի այս պահին, և ողջ անձնակազմը կենտրոնացված է Երևան քաղաքում, ինչը հիմք է հանդիսանում քննիչի աշխատանքը էլ ավելի ծանրաբեռնելու համար: Այսպես, օրինակ, եթե հեռավոր մարզերից մեկում գրանցվում է կոռուպցիոն ենթադրյալ հանցագործության դեպք, ապա քննիչը, որին հանձնարարվում է տվյալ գործի (վարույթի) քննությունը, գործուղվում է համապատասխան մարզ, սա առաջացնում է միջոցների և ժամանակի լրացուցիչ ծախս:

Այս պայմաններում պետք է փաստել, որ անիրատեսական է քրեական վարույթ փաստացի իրականացնող 23 քննիչների միջոցով 2023 թվականի հունվարի 1-ից իրականացնել կոռուպցիոն բնույթի բոլոր ենթադրյալ հանցագործությունների նախաքննությունը: Այդպիսի պայմանները վստահաբար բացասաբար են անդրադառնալու քննության պատշաճ որակի վրա, կարող են պատճառ դառնալ ինչպես քննության մեջ թերացումների, այնպես էլ դատավարական ժամկետների

---

<sup>8</sup> Beaumartin-ն ընդդեմ Ֆրանսիայի, § 33:

<sup>9</sup> Pretto-ն եւ այլք ընդդեմ Իտալիայի, § 37:

<sup>10</sup> Comingersoll S.A.-ն ընդդեմ Պորտուգալիայի [ՄՊ], Frydlender-ն ընդդեմ Ֆրանսիայի [ՄՊ], § 43, Sürmeli-ն ընդդեմ Գերմանիայի [ՄՊ], § 128):

<sup>11</sup> (Katte Klitsche de la Grange-ն ընդդեմ Իտալիայի, § 55, Papachelas-ն ընդդեմ Հունաստանի [ՄՊ], § 39:

<sup>12</sup> Martins Moreira-ն ընդդեմ Պորտուգալիայի, § 60:

ձգձգումների, ինչն էլ հանգեցնելու է անձանց սահմանադրական իրավունքների անհարկի խախտման: Չունենալով համապատասխան ժամանակ, միջոցներ և ռեսուրսներ՝ քննիչներն իրենց կամքից անկախ չեն կարողանա բոլոր գործերով դրսևորել պատշաճ ջանասիրություն և ապահովել գործերի քննության բարձր որակ:

Այլ կերպ՝ Կոմիտեի քննիչների և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց գերձանրաբեռնվածությունը մեղմելու, դրանով քննության արդյունավետությունը բարձրացնելու միջոց է ընտրվել Կոմիտեի ինքնավար և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնների հաստիքների ավելացումը, որն ինչպես արդեն նշվել է իրականացվելու է 1 տարվա ընթացքում (2023 թվականի ընթացքում)՝ կապված ինչպես հաստիքների փոլային տրամադրման, այնպես էլ թեկնածուների ընտրության մրցութային ժամկետների հետ: Նախատեսվում է նաև 2023 թվականի ընթացքում համալրվող նոր աշխատակիցների համար ապահովել շենքային և նյութատեխնիկական բավարար պայմաններ:

Հետևաբար, մինչ այդ՝ 2023 թվականի ընթացքում, Կոմիտեն տևական ժամանակ աշխատելու է մինչև 2023 թվականը համալրված հաստիքներով և նույն ծանրաբեռնվածությամբ:

Նման պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 17-րդ մասի կարգավորումների ուժով ՀՀ ողջ տարածքում կոռուպցիոն բնույթի բոլոր հանցագործությունների նախաքննությունը Կոմիտեին վերապահելը լի է քննության արդյունավետության անկանխատեսելի նվազեցման և քրեական հետապնդման ժամկետների խախտման անդառնալի հետևանքներով:

Այս հիմնավորմամբ Նախագծով առաջարկվում է քննչական ենթակայության գործող կարգավորումները պահպանել նաև 2023 թվականի ընթացքում, ինչը հնարավորություն կտա իրականացնել ծանրաբեռնվածությունը մեղմելուն և քննության արդյունավետությունն ապահովելուն ուղղված վերը նշված միջոցառումները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ *Սույն օրենսգրքի 180-րդ և 181-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունվարի 1-ից: Մինչ այդ գործում են սույն հոդվածի 16-րդ և 17-րդ մասերով սահմանված քննչական ենթակայության կանոնները: Սույն օրենսգրքով հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների ենթակայությանը վերապահված, սակայն մինչև «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքը (սույն մասում այսուհետ՝ Օրենք) ուժի մեջ մտնելը հարուցված քրեական գործերով նախաքննությունն իրականացնում են այն մարմինները, որոնք մինչև Օրենքն ուժի մեջ մտնելը նշված գործերով իրականացրել են նախաքննություն, բացառությամբ այն գործերի, որոնք Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից Օրենքով սահմանված կարգով՝ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի համաձայնությամբ հանձնվել են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթին: Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը նշված գործերը կարող է այդ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի համաձայնությամբ հանձնել հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթին: Սույն օրենսգրքին ուժի մեջ մտնելուց հետո նախաքննություն իրականացրած մարմնի գործունեությունը*

*դադարեցվելու դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը վերը նշված գործերով վարույթը շարունակելը հանձնարարում է քննչական կոմիտեին:*

Ինչպես նկատում ենք, օրենսդիրը փորձել է վերոհիշյալ կարգավորմամբ չեզոքացնել նախաքննության տարբեր մարմիններում տարիներ շարունակ քննվող կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ գործերը Կոմիտեին փոխանցելու հետևանքով գերծանրաբեռնվածություն և քննության անարդյունավետություն առաջացնելու վտանգը: Նախագծով առաջարկվում է նույն արգելքը. այն է՝ մինչև 2024 թվականը այլ մարմիններում հարուցված և քննվող կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը (վարույթները) 2024 թվականի հունվարի 1-ից հետո չփոխանցվեն Հակակոռուպցիոն կոմիտե:

#### **4. Առաջարկվող կարգավորման բնույթը.**

Վերոգրյալի հաշվառմամբ Նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 12-րդ մասով նախատեսված ժամկետը հետաձգել 8 ամսով՝ **հնարավորություն ընձեռելով Համակարգի երկարաժամկետ, կոնկրետ քրեական վարույթներով պիլոտային փորձարկման միջոցով վերահանել և շտկել բոլոր հնարավոր թերությունները, լուծել Համակարգի անվտանգ շահագործման հարցերը՝ հետագա բացասական հետևանքներից խուսափելու նպատակով:**

**Բացի այդ, առաջարկվում է մինչև 2024 թվականի հունվարի 1-ը պահպանել մինչև 2023 թվականի հունվարի 1-ը գործող օրենսդրական կարգավորումները:** Բացի այդ, Նախագծով առաջարկվում է նախատեսել արգելք, համաձայն որի՝ մինչև 2024 թվականը այլ մարմիններում հարուցված և քննվող կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը (վարույթները) 2024 թվականի հունվարի 1-ից հետո չփոխանցվեն Հակակոռուպցիոն կոմիտե, այլ նախաքննությունը շարունակվի այն մարմինների կողմից, որոնք մինչ այդ իրականացրել են դրանց նախաքննությունը:

#### **5. Ակնկալվող արդյունքը.**

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է ապահովել քրեական գործերով մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման անխափան, ամբողջական, անվտանգության բարձր երաշխիքներ ունեցող համակարգի գործարկումը, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեում քրեական գործերի արդյունավետ և ժամանակին քննությունը:

**6. Նախագծի ընդունման կապակցությամբ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին.**

Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը բացակայում է. ՀՀ պետական բյուջեի ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

**7. Նախագծի մշակման ընթացքում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և հակակոռուպցիոն կոմիտեի կողմից: